

Թիւ 22816  
Փետրուար 6, 1970

Հոգեցնորհ  
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան  
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցւոյ  
Եւ Սահմանական Խորհուրդի  
Գլուխէնտ.

Սիրելի Հայր Արշակ,

Հոկտեմբեր 80, 1969 թուականաւ 2եզի ղրկուած թիւ 281 մեր շրջաբերականով յանձնարարած էինք Յունուար ամսուան ընթացքին գումարնել ծխական ժողովը եւ Առաջնորդարան ղրկել.

1. ծխական ժողովի ընտրութեան արդիւնքը
2. ծխական ժողովին ներկայացուած տեղեկագիրները
3. ծխական ժողովին ներկայացուած ելեւմտական հաշուեկշիռը
4. Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագիրը
5. Թեմական պատգամաւորներու անունը եւ հասցէն
6. Եկեղեցական կազմակերպութեանց վարչական մարմիններու ատենապետներուն անունը, հասցէն եւ հեռածայնի թիւը:

Ստացած ենք Յունուար 26, 1970 թուակիր 2եր տեղեկագիրը, որուն չեք կցած վերոյիշեալ շրջաբերականին մէջ յիշուած հետեւեալ նիւթերը.-

1. ծխական ժողովին ներկայացուած տեղեկագիրները
2. ծխական ժողովին ներկայացուած ելեւմտական հաշուեկշիռը
3. Թեմական պատգամաւորներու հասցէները
4. Եկեղեցական կազմակերպութեանց վարչական մարմիններու ատենապետներուն անունը, հասցէն եւ հեռածայնի թիւը:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել սոյն նիւթերը, որպէս զի առաջին առիթով վաւերացնենք ծխական ժողովին ընտրութիւնները:

Սիրոյ ողջունիւ

ԽՈՐԿՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ